

Արձանագրություն №1/2021-2022

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2021թ. սեպտեմբերի 30-ին կայացած թիվ 1 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 74-ը (յոթանասունչորսը):

Նիստը նախագահում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հովհաննես Հովհաննիսյանը: Նիստի քարտուղարն էր Լևոն Հովսեփյանը:

Գիտական խորհրդի նախագահ Հ. Հովհաննիսյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և առաջարկեց հաստատել նիստի օրակարգը.

1. ԵՊՀ գիտական խորհրդի 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում (զեկ.՝ գիտքարտուղար Լ. Հովսեփյան):
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ համալսարանի ստորաբաժանումներից առաջադրված պրոֆեսորադասախոսական կազմի թեկնածուների ընտրություն (զեկ.՝ ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյան):
3. Դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյան):
4. 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում (զեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյան):
5. ԳԽ-ի որակի ապահովման հանձնաժողովի կազմում փոփոխություն կատարելու մասին (զեկ.՝ գիտքարտուղար Լ. Հովսեփյան):
6. ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում «Սոցիալական հետազոտությունների ինովացիոն կենտրոն» ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն ներկայացնելու մասին (զեկ.՝ սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ա. Մկրտիչյան):
7. ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում «Ռուսաստանյան հետազոտությունների կենտրոն» ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն ներկայացնելու մասին (զեկ.՝ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան Գ. Պետրոսյան):

8. Օտարերկրյա ուսանողների օտարալեզու ծրագրերի վարձաչափերում փոփոխություն կատարելու մասին (զեկ.՝ միջազգային համագործակցության վարչության պետ Ա. Մարգարով):

Գիտլսրհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը՝ առաջարկված փոփոխությամբ:

1. Լսեցին. - գիտական խորհրդի 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատման մասին: Գիտքարտուղար Լ. Հովսեփյանը նշեց, որ ժամանակացույցով նախատեսված է գիտական խորհրդի 3 նիստերի անցկացում, ներառված հարցերը հիմնականում պլանային են՝ ընդգրկելով թվով 18 հարց:

Որոշեցին. - հաստատել գիտական խորհրդի 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցը:

2. Լսեցին. - «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ համալսարանի ստորաբաժանումներից առաջադրված պրոֆեսորադասախոսական կազմի թեկնածուների ընտրության մասին: Ռեկտորի Ժ/պ Հ. Հովհաննիսյանը ներկայացրեց, որ կանոնադրային փոփոխություններով հոգաբարձուների խորհրդի թվակազմը նվազել է և պետք է ներկայացնել պրոֆեսորադասախոսական կազմի 5 ներկայացուցիչ: Ներկայացնելով կառուցվածքային ստորաբաժանումներից առաջադրված թեկնածուներին՝ Հ. Հովհաննիսյանը հայտնեց թեկնածուներ Աշոտ Սաղյանի և Սարգիս Քելյանի ինքնաբացարկի մասին: Նա նաև հայտնեց, որ Վարուժան Աթաբեկյանը թեև ԵՊՀ գիտական խորհրդի անդամ է, հոգաբարձուների խորհրդի անդամ ընտրվելու դեպքում դիմում կներկայացնի գիտական խորհրդի կազմից դուրս գալու մասին, և այդ հարցում շահերի բախում չի առաջանա:

Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրված թեկնածուներն էին.

- Աթաբեկյան Վարուժան Սերգեյի-Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ)

- Ալահվերդյան Ռոմա Բախշիի- Օպտիկայի ամբիոնի վարիչ, ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Ֆիզիկայի ֆակուլտետ)

- Գաբրիելյան Մխիթար Ռազմիկի-Հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու (Պատմության ֆակուլտետ)
- Խաչատրյան Նարինե Գազիկի- Անձի հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ)
- Հախումյան Արսեն Ալեքսանդրի- Հեռահաղորդակցության և ազդանշանների մշակման ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ)
- Ստեփանյան Վահե Վարդանի – Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Իրավագիտության ֆակուլտետ)
- Փոլադյան Աննա Արշակի – Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (Կենսաբանության ֆակուլտետ)
- Քոչարյան Հայկ Մկրտչի- Արաբագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ (Արևելագիտության ֆակուլտետ)

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Հովհաննիսյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Պետրոսյան Դավիթ (նախագահ)
2. Ավետիսյան Արմեն
3. Ավետիսյան Հայկ
4. Հովհաննիսյան Դավիթ
5. Մարգարյան Նարեկ

Անցկացվեց փակ (զադտնի) քվեարկություն, որի արդյունքների հիման վրա գիտական խորհուրդը **որոշեց.**

1. Հաստատել ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրված և ԵՊՀ գիտական խորհրդում ընտրված՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի պրոֆեսորադասախոսական կազմի ներքոնշյալ անդամների ցուցակը.

1.	Աթաբեկյան Վարուժան Սերգեյի	Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
2.	Գաբրիելյան Մխիթար Ռազմիկի	Հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու
3.	Խաչատրյան Նարինե Գազիկի	Անձի հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
4.	Փոլադյան Աննա Արշակի	Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

5.	Քոչարյան Հայկ Մկրտչի	Արաբագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
----	----------------------	--

2. Միջնորդությամբ հանդես գալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության առջև՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամության՝ Համալսարանի կողմից առաջադրված վերոնշյալ կազմը ՀՀ վարչապետի հաստատմանը ներկայացնելու համար:

3. Լսեցին. Դոցենտի գիտական կոչումների շնորհման մասին:

Գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյանը ներկայացրեց դոցենտի կոչման հավակնորդների մասին ամփոփ տվյալներ՝ նշելով, որ դոցենտի կոչման 4 հավակնորդի վերաբերյալ հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն՝ «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» պահանջներին համապատասխան:

Դոցենտի գիտական կոչման հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Ծատուրյան Ավետիս Հովհաննեսի	Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ասիստենտ
2.	Դադայան Անի Սլավիկի	Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի ասիստենտ
3.	Միրզոյան Նարինե Զորիկի	Աստվածաբանության ամբիոնի ասիստենտ
4.	Ղուշյան Գևորգ Հրաչիկի	Աստվածաբանության ամբիոնի ասիստենտ

Կազմակերպվեց փակ գաղտնի քվեարկություն: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Դ. Պետրոսյանը ներկայացրեց փակ-գաղտնի քվեարկության արդյունքները, ըստ որի քվեարկությանը մասնակցել է գիտական խորհրդի 74 անդամ:

Դոցենտի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Ծատուրյան Ավետիս Հովհաննեսի	70	2	2
2.	Դադայան Անի Սլավիկի	71	1	2
3.	Միրզոյան Նարինե Զորիկի	74	0	0
4.	Ղուշյան Գևորգ Հրաչիկի	74	0	0

Որոշեցին - Դիմել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ դոցենտի գիտական կոչումներ շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:

4.Լսեցին.-ԵՊՀ 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատման մասին: Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը ներկայացրեց, որ այս տարի 55 անվանական կրթաթոշակի համար ներկայացվել է 58 թեկնածու, որոնցից 44-ը նոր են, և ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են պահանջվող չափանիշներին:

Որոշեցին. – հաստատել ԵՊՀ 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը:

Որոշումն ընդունվեց միաձայն:

5.Լսեցին.-ԳԽ-ի որակի ապահովման հանձնաժողովի կազմում փոփոխություն կատարելու մասին: Գիտքարտուղար Լ. Հովսեփյանը նշեց, որ ԵՊՀ գիտական խորհրդում կատարված փոփոխությամբ պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել ԳԽ որակի ապահովման հանձնաժողովում ևս փոփոխություն կատարել, քանի որ Ֆարմացիայի ինստիտուտի նախկին տնօրեն Աշոտ Սադյանը դուրս է եկել գիտական խորհրդի կազմից: Առաջարկվեց որակի ապահովման հանձնաժողովի կազմում Ա. Սադյանի փոխարեն ընդգրկել ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Խ. Ներկարարյանին:

Որոշեցին. –Աշոտ Սադյանին հանել ԳԽ որակի ապահովման հանձնաժողովի կազմից և հանձնաժողովի կազմում ընդգրկել Խաչատուր Ներկարարյանին:

6.Լսեցին.- ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում «Սոցիալական հետազոտությունների ինովացիոն կենտրոն» ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն ներկայացնելու մասին: Սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ա. Մկրտիչյանը նշեց, որ կենտրոնը պատվերների հիման վրա իրականացնելու է սոցիոլոգիական կիրառական հետազոտություններ, դրանց առևտրայնացում, մատուցելու փորձագիտական-խորհրդատվական ծառայություններ, ինչը նաև լրացուցիչ ֆինանսական հոսքեր կապահովի: Ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյանը նկատեց, որ սոցիոլոգիական հետազոտությունների ոլորտը որոշ առումով ամայի է Հայաստանում և այդ կենտրոնի ստեղծմամբ ԵՊՀ-ն հանձնառություն է ստանձնում՝ հույս հայտնելով, որ ստեղծվելիք կենտրոնը կունենա կարևոր իր դերը սոցիալական հետազոտությունների բնագավառում:

Որոշեցին. – Առաջարկել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝ ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում ստեղծել «Սոցիալական հետազոտությունների ինովացիոն կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանում:

7.Լսեցին.– ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում «Ռուսաստանյան հետազոտությունների կենտրոն» ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն ներկայացնելու մասին: Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան Գեղամ Պետրոսյանը ներկայացրեց, որ կենտրոնն իրականացնելու է գիտահետազոտական և փորձագիտական գործունեություն պատմության, միջազգային հարաբերությունների տեսության, քաղաքագիտության և մշակութային-քաղաքակրթական ոլորտներում: Նպատակը հայ-ռուսական հետազոտական համագործակցության հարթակի ստեղծումն է, որը կհամախմբի փորձագիտական հանրությանը: Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Արա Ալեքսանյանը դիտարկումներ արեց կենտրոնի ստեղծման հիմնավորման առնչությամբ՝ նշելով, որ դրանում նախևառաջ պետք է ներկայացված լինեն, թե ի՞նչ մասնագիտական ներուժ է առկա ֆակուլտետում նման հետազոտությունների իրականացման համար: Ռեկտորի Ժ/պ Հ. Հովհաննիսյանը կարևորեց նման կենտրոնի ստեղծումը՝ նկատելով, որ այսօր Ռուսաստանը տարբեր ասպեկտներով խորքային ու մասնագիտական առումներով հասկանալու, ուսումնասիրելու խնդիր կա:

Որոշեցին. – Առաջարկել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում ստեղծել «Ռուսաստանյան հետազոտությունների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանում:

8.Լսեցին.–Օտարերկրյա ուսանողների օտարալեզու ծրագրերի վարձաչափերում փոփոխություն կատարելու մասին: Միջազգային համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Մարգարովն առաջարկեց օտարերկրյա ուսանողների օտարալեզու ծրագրերի վարձաչափերը մեկուկես տարվա համար սահմանել համապատասխանաբար բակալավրիատում 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար), իսկ մագիստրատուրայում 1.600.000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Նա նաև նշեց, որ օտարալեզու ծրագրերով կազմավորվող մասնագիտական խմբերում ընդգրկված ոչ բավարար քանակով ուսանողների դեպքում նշված վարձաչափերը կարող են բարձրանալ մատուցվող ծառայության ինքնարժեքի ծախսերի ապահովման նպատակով:

Որոշեցին. – Օտարերկրյա ուսանողների օտարալեզու ծրագրերի վարձաչափերը մեկուկես տարվա համար սահմանել՝ բակալավրիատում 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար), մագիստրատուրայում 1.600.000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

9.Լսեցին.- Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղարին ԵՊՀ պարզևի ներկայացման մասին: Ռեկտորի Ժ/պ Հ. Հովհաննիսյանը նշեց, որ ս/թ հոկտեմբերի 4-ին ՀՀ կատարած այցի շրջանակում ԵՊՀ է այցելելու Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար Լուիզ Միշիկիվաբոն: Հաշվի առնելով վերջինիս կարևոր դերակատարությունը Հայաստանի հետ կազմակերպության համագործակցության զարգացման ու խորացման գործում՝ առաջարկվեց Լ. Միշիկիվաբոնին շնորհել ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

Որոշեցին. – Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար Լուիզ Միշիկիվաբոնին շնորհել «ԵՊՀ պատվավոր դոկտոր» պատվավոր կոչում:

Գիտական խորհրդի նախագահ՝

Հ. Վ. Հովհաննիսյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ.Ս. Հովսեփյան

06.10.2021թ.